

Թիւ 22865
Փետրուար 20, 1970

Հոգեշնորհ
Տ. Վազգէն Վրդ. Քէշիշեան
Հովիւ Ս. Յարութիւն Հայց. Եկեղեցւոյ
եւ Սահագան ծխական Խորհուրդի
Սառլթ Միլվորթի.

Սիրելի Հայր Վազգէն,

Ստացած ենք Փետրուար 18, 1970 թուակիր 2-եր նամակը, որով կը
յայտնէք թէ ծխական Խորհուրդիդ անդամ Տիար ֆրէնք Մարգարեան, ըս-
նաւոր պատճառով հրաժարած է; Կնքեալ տարուած ծխական ժողովին մէջ
կատարուած ընտրութեան առաւելագոյն քուէ ստացող Տիար Էնթոնի Սի-
ֆալտին հրաւիրած էք պաշտօնավարելու մինչեւ յաջորդ Տարեկան ծխ-
կան ժողով, լրացնելու համար նախորդին շրջանը, եւ կը խնդրէք վա-
ւերացնել Պրն. Սիֆալտիի պաշտօնը:

Այսու կը վաւերացնենք Պրն. Էնթոնի Սիֆալտի անդամակցութիւնը
ծխական Խորհուրդիդ, հիմնուած 2-եր տուած տեղեկութեան վրայ:

Սիրոյ ողջունիւ

ԽՈՐԿՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ